Habitat for Humanity® Armenia

2017 ֆինանսական տարվա

ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Յուրաքանչյուր ընտանիք
Հայաստանում արժանի է ապրելու
ՊԱՏՇԱՃ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մայրաքաղաքը՝ Երևան

Բնակչությունը՝ 3 մլն.

Աղքատության ցուցանիշը՝ 32 տոկոս

Գործազրկությունը՝ 17.6 տոկոս

Կյանքի միջին տևողությունը՝ 74.8 տարի

ԳԻՏԵ՞Ք ԱՐԴՅՈՔ...

Աշխարհում առաջին եկեղեցին կառուցվել է Հայաստանում:

Շախմատը հանրային դպրոցներում պարտադիր առարկա է:

Հարգելի ընթերցող,

Որպես «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ես երջանիկ եմ, որ ունեմ հնարավորություն օգնելու Հայաստանում ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները: Հայաստանը պետք է դառնա մի երկիր, որտեղ յուրաքանչյուրը կունենա ապրելու պատշաճ կացարան: Չնայած ահագնացող աղետներին և համայնքների փոփոխվող կարիքներին՝ Հաբիթաթ Արմենիան միավորում է մարդկանց կառուցելու տներ, համայնքներ և կերտելու հույս:

2016 ֆինանսական տարում (2015թ. հուլիսի 1-ից մինչև 2016թ. հունիսի 30-ը) մեր գործընկեր ընտանիքների, միջազգային և տեղական կամավորների, գործընկեր ֆինանսական կազմակերպությունների միասնական ջանքերի շնորհիվ մենք օգնել ենք 1,024 ցածր եկամուտ ունեցող ընտանիքների՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները և ավելի քան 3,427 անհատների տրամադրել ենք բնակարանային ոլորտի աջակից ծառայություններ: 2017 ֆինանսական տարվա ծրագրերի միջոցով մենք պարտավորվում ենք աջակցել ավելի քան 1,100 հայ ընտանիքի: Ընտանիքներին և համայնքներին ուղղված ծրագրերի հաջող իրականացումը պահանջում է հսկայական ջանքեր և, իհարկե, հմուտ ղեկավարում, աշխատասիրություն և մանրակրկիտ պլանավորում:

Դնելով նոր թիրախներ և աղոթելով Հայաստանում մեր հնարավորությունների համար՝ ես ակնկալում եմ տեսնել արդեն բարելավված տներ, ուժեղացված համայնքներ և վերականգնված հույս:

Լուիզա Վարդանյան,

Գործադիր տնօրեն

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի մասին

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա»-ն (Հաբիթաթ Արմենիա) հանդիսանում է «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Ինթերնեշնլ»-ի ազգային գրասենյակը Հայաստանում՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա պատշաճ տուն:

2000 թվականից ի վեր, Հաբիթաթ Արմենիայի ջանքերի շնորհիվ, ավելի քան 5,200 ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ նոր հույս են գտել մատչելի բնակարանների տեսքով:

Վերջին տարիներին Հաբիթաթ Արմենիան մեծացրել է իր դերը բնակարանային պայմանների բարելավման գործում՝ նպաստելով երկրում էներգախնայողության բարեփոխումների իրականացմանը: Համագործակցելով ֆինանսական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, համատիրությունների և բազմաբնակարան շենքերի բնակիչների հետ՝ Հաբիթաթ Արմենիան նախաձեռնում է կայուն էներգախնայողության ծրագրեր բազմաբնակարան շենքերում:

Մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն կարող է օգնել յուրաքանչյուր ոք՝ ֆինանսական աջակցության և կամավորության միջոցով սատարելով ընտանիքներին ունենալ ուժ, կայունություն, ինքնավստահություն՝ իրենց համար կերտելու առավել բարեկեցիկ կյանք:

Լրացուցիչ տեղեկությունների, կամավոր աշխատանքի կամ աջակցության համար այցելեք www.habitat.am կայքէջ:

2001-2016 ֆինանսական տարիների ընթացքում աջակցություն ստացած ընտանիքների թվային պատկերը



Բնակարանային միկրոֆինանսավորում

Համագործակցելով ունիվերսալ վարկային կազմակերպությունների հետ՝ Հաբիթաթ Արմենիան իրականացնում է միկրոֆինանսավորման ծրագրեր, որոնց նպատակն է օժանդակել ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքներին վերանորոգելու և վերակառուցելու իրենց կացարանները, բարելավելու էներգաարդյունավետությունը, ջրամատակարարման և սանիտարական պայմանները և օգտագործելու վերականգնվող էներգիայի աղբյուրներ: Ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար հաճախ դժվար է լինում վարկեր ստանալ բանկերից ոչ բավարար եկամուտ ունենալու պատճառով: Համագործակցելով միկրոֆինանսական կազմակերպությունների հետ՝ Հաբիթաթ Արմենիան հասանելի է դարձնում ֆինանսական ռեսուրսները ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար: Ծրագրերը նպատակ ունեն նաև կյանքի վերակոչել պատերազմից տուժած քաղաքային և գյուղական համայնքները: Բնակարանային միկրոֆինանսավորման ծրագրերի շրջանակներում Հաբիթաթ Արմենիան 2000 թ-ից մինչև 2016 թ-ի հունիսի վերջ աջակցել է 4,135 ընտանիքների:

Ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կացարաններում առկա հիմնական խնդիրներն են կացարանների թերի ջերմամեկուսացումը, ջեռուցման, ջրամատակարարման և կոյուղատար համակարգերի տեխնիկական վատ վիճակը, սանիտարական հանգույցների և խոհանոցային պայմանների ոչ բավարար վիճակը: Պատուհանների ջերմամեկուսացումն առաջնային խնդիր է բոլոր մարզերում: Մի շարք մարզերում շատ ընտանիքներ չունեն պատշաճ ջեռուցման համակարգ և կացարանի տաքացման համար փայտ են օգտագործում, որն իր հերթին բացասական ազդեցություն է ունենում առողջության և շրջակա միջավայրի վրա:

Այս ծրագրերի շրջանակներում Հաբիթաթ Արմենիան տրամադրում է նաև տեխնիկական աջակցություն՝ կազմակերպելով դասընթացներ մասնակից ընտանիքների, ինչպես նաև գործընկեր ֆինանսական հաստատությունների վարկային մասնագետների համար, մշակելով և բաժանելով տեղեկատվական բուկլետներ, տրամադրելով շինարարական տեխնիկական խորհրդատվություն: Սույն ծրագրերի շրջանակներում տարբեր երկրներից ներգրավվում են կամավորների խմբեր՝ շինարարական աշխատանքներին մասնակցելու նպատակով:

Ծրագրի անվանումը՝ «Վերականգնվող էներգիայի ֆինանսավորում»

- **Ծրագրի տևողությունը՝** օգոստոս, 2016թ. – օգոստոս, 2020թ.
- **Ծրագրի բյուջեն 2017 ՖՏ-ում՝** $21,780
- **Ներդրված կապիտալ՝** ընդհանուր $136,450, որից $105,000-ը՝ Հաբիթաթ Արմենիայի ֆինանսավորում և $31,450-ը՝ «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ի համաֆինանսավորում
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2017 ՖՏում՝** 99 ընտանիք
- **Վարկի միջին գումարը՝** $1,160
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը**՝ $1,380
- **Ծրագրի գործընկերը՝** «Գլոբալ Կրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ
- **Պահանջվող գումարը**՝ $15,000

Ծրագրի նկարագիրը

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ. տարեկան կտրվածքով Հայաստանում արևային ժամերի միջին քանակը կազմում է 2,500: Սույն ծրագիրը հասանելի է դարձնում ֆինանսական ռեսուրսները ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար արևային սարքավորումներ գնելու և տեղադրելու նպատակով: Արևային էներգիայի օգտագործումն արդյունավետ լուծում է էներգակիրների գծով կատարվող ծախսերը կրճատելու համար: Այս ծրագրի իրականացման միջոցով Հաբիթաթ Արմենիան նպատակ ունի խթանել արևային էներգիայի կիրառումը ցածր և միջին եկամուտ ունեցող ընտանիքների կողմից՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս ունենալ մատչելի տաք ջուր և էլեկտրականություն:

Բնական գազի գինը վերջին տասնամյակում ավելի քան կրկնապատկվել է՝ բացասաբար ազդելով ցածր և միջին եկամուտ ունեցող բնակչության ջեռուցման պայմանների վրա: Այսպիսով, ծրագրի հաջող իրականացումը զգալիորեն կմեղմացնի էներգակիրների աճող գների ազդեցությունը բնակչության բարեկեցության վրա:

Կազմակերպությունը նաև բարձրացնում է բնակչության իրազեկվածությունն արևային տեխնոլոգիաների և դրանց առավելությունների վերաբերյալ՝ կազմակերպելով դասընթացներ ծրագրին մասնակից ընտանիքների և գործընկեր ֆինանսական հաստատության վարկային մասնագետների համար, ինչպես նաև մշակելով և բաժանելով տեղեկատվական բուկլետներ:

Ծրագրի անվանումը՝ «Հույս կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին»

- **Ծրագրի տևողությունը՝** հուլիս, 2012թ. – սեպտեմբեր, 2017թ.
- **Ծրագրի բյուջեն 2017 ՖՏ-ում՝** $25,350
- **Ներդրված կապիտալ՝** $250,000 Հաբիթաթ Արմենիայի կողմից
- **Սպասարկված գործընկեր ընտանիքների թիվը՝ (հուլիս, 2012թ. – հունիս, 2016թ.)՝** 454
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների թիվը 2017 ՖՏ-ում՝** 70
- **Վարկի միջին գումարը՝** $2,105
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը՝** $3,035
- **Ծրագրի գործընկեր՝** «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ
- **Պահանջվող գումարը՝** $18,000

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի հիմնական նպատակն է հասանելի դարձնել ֆինանսական ռեսուրսները ցածր եկամուտ ունեցող, սակայն տնտեսապես ակտիվ և կանանց կողմից ղեկավարվող ընտանիքների համար՝ բնակարանային պայմանները բարելավելու նպատակով: Ցածր եկամուտ ունեցող կանայք հաճախ ապրում են բնակարանային սուղ և անապահով պայմաններում և հնարավորություն չունեն վերանորոգել իրենց բնակարանները:

Հայաստանում, մասնավորապես գյուղական համայնքներում, կանայք ցածր եկամուտ են վաստակում, որը խոչընդոտ է ֆինանսական հաստատությունների կողմից վարկավորվելու գործում: Սույն ծրագիրը հնարավորություն է ընձեռում կանանց կողմից ղեկավարվող ընտանիքներին ստանալ վարկեր, ինչպես նաև ֆինանսական միջոցների կառավարման գիտելիքներ և շինարարության տեխնիկական աջակցություն, որը նպաստում է վարկային միջոցների արդյունավետ օգտագործմանը և ընտանիքների ֆինանսական կայունությանը:



Բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետության բարձրացում

Համատիրությունների կարողությունների զարգացում

Հայաստանում բնակչության գրեթե կեսը բնակվում է բազմաբնակարան շենքերում (շուրջ 19,000 շենք և 435,350 բնակարան): Հայաստանում բնակարանային ֆոնդի մեծ մասը գտնվում է անմխիթար վիճակում: Չկան պատշաճ պահպանման և կառավարման համակարգեր, որոնք հանգեցնում են բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վատթարացմանը: Միևնույն ժամանակ շենքերում իրականացված չէ պատշաճ ջերմամեկուսացում, քանի որ կառուցապատման և ջեռուցման նախկինում կիրառված մեթոդները չեն հիմնվել էներգաարդյունավետության ժամանակակից չափանիշների վրա:

Սույն խնդիրը լուծելու համար Հաբիթաթ Արմենիան իրականացնում է ծրագրեր՝ ուղղված բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը: Այս ծրագրերի շրջանակներում Հաբիթաթ Արմենիան համագործակցում է քաղաքապետարանների հետ, որոնք տրամադրում են մինչև 40% սուբսիդավորում, և ֆինանսական հաստատությունների հետ, որոնք տրամադրում են վարկավորում: 2016թ. հունիսի վերջի դրությամբ սույն ծրագրերի շրջանակներում վերանորոգվել է 19 շենք, աջակցություն է տրամադրվել 1,049 ընտանիքների: Համաձայն ծրագրերին մասնակցած համատիրությունների հարցման արդյունքների՝ ծրագրերի իրականացման արդյունքում բարձրացել է շենքերի հարմարավետության մակարդակը. այն շենքերում, որտեղ տեղադրվել են դռներ և պատուհաններ, բարելավվել է էներգաարդյունավետությունը, բարձրացել է բնակիչների վստահությունը համատիրությունների նկատմամբ, որն իր հերթին բարձրացրել է պարտադիր նորմերով սահմանված վճարների հավաքագրման մակարդակը:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի ընդհանուր տարածքների վերանորոգում»

- **Ծրագրի տևողությունը՝** 2011թ. - անժամկետ
- **Ծրագրի բյուջեն 2017 ՖՏ-ում՝** $22,700
- **Ներդրված կապիտալ՝** $33,700՝ Հաբիթաթ Արմենիայի կողմից և $21,150 սուբսիդիա քաղաքապետարանների կողմից
- **Սպասարկված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը (2011թ. - հունիսի 30, 2016թ.)՝** 615 ընտանիք, 10 շենք
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2017 ՖՏ-ում՝** 180 ընտանիք, 5 շենք
- **Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝** $3,500
- **Մեկ ընտանիքի սպասարկման միջին գումարը՝** $300
- **Ծրագրի գործընկերներ՝** քաղաքապետարաններ, համատիրություններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ
- **Պահանջվող գումար՝** առնվազն $50,000 երաշխիքային ֆոնդի ստեղծման նպատակով

Ծրագրի նկարագիրը

Ծրագիրը մեկնարկել է 2011թ. և ուղղված է բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը: Համատիրությունները չունեն բավարար կարողություններ իրականացնելու բազմաբնակարան շենքերի պատշաճ պահպանում, և բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից վճարվող պարտադիր վճարները բավարար չեն շենքերի վերանորոգման ծախսերը հոգալու համար: Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել համատիրությունների կարողությունները և դրանց համար հասանելի դարձնել ֆինանսական միջոցները՝ շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները (աստիճանավանդակը, տանիքը, դռներն ու պատուհանները, ջրատար և կոյուղու խողովակները և այլն) բարելավելու նպատակով:

2016թ. հունիսի վերջի դրությամբ սույն ծրագրի շրջանակներում վերանորոգվել է 10 շենք, աջակցություն է տրամադրվել 615 ընտանիքների: Հաբիթաթ Արմենիան 2017 ֆինանսական տարում նախատեսում է օժանդակել առնվազն 5 բազմաբնակարան շենքերում ընդհանուր տարածքների վերանորոգման աշխատանքների իրականացմանը: Վերանորոգված տարածքները հետագայում կպահպանվեն համատիրությունների կողմից:

Ծրագրի անվանումը՝ «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում՝ ուղղված ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին» (ԲԲՇԷԱԲ)

- **Ծրագրի տևողությունը՝** ապրիլ, 2013թ. – ապրիլ, 2017թ.
- **Ծրագրի բյուջեն 2017 ՖՏ-ում՝** $83,500
- **Ներդրված կապիտալ՝** $200,000՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից և $17, 270 սուբսիդիա քաղաքապետարանների կողմից
- **Սպասարկված ընտանիքների և շենքերի թիվը (ապրիլ, 2013թ. - հունիսի 30, 2016թ.)՝** 434 ընտանիք, 9 շենք
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2017 ՖՏ-ում ՝** 195 ընտանիք, 5 շենք
- **Մեկ շենքին տրամադրվող վարկի միջին գումարը՝** $3,160
- **Ծրագրի նվիրատուն՝** ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ), Հաբիթաթ Արմենիայի համաֆինանսավորում
- **Ծրագրի գործընկերները՝** Երևանի քաղաքապետարան, համատիրություններ, «Ինեկոբանկ» ՓԲԸ

Ծրագրի նկարագիրը

Ծրագիրը նպատակ ունի բարելավել բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության բարձրացման ներդրումների միջավայրը, մշակել և փորձարկել վերարտադրվող ֆինանսական մոդելներ, ինչպես նաև բարձրացնել համատիրությունների ինստիտուցիոնալ կարողությունները: Ծրագիրն ուղղված է Հայաստանի բազմաբնակարան շենքերում բնակվող ցածր եկամուտ ունեցող ընտանիքների կացության պայմանների բարելավմանը:

2017 ֆինանսական տարում ավելի քան 5 շենքերի էներգաարդյունավետությունը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ շքամուտքերի պատուհանների և մուտքի դռների փոխարինում և վերանորոգում, լուսավորության համակարգի արդիականացում և մասնակի ջերմամեկուսացում:

Ծրագրի անվանումը՝ «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» (ՎԱԷՀՔ)

- **Ծրագրի տևողությունը՝** դեկտեմբեր, 2014թ. - դեկտեմբեր, 2018թ.
- **Ծրագրի բյուջեն 2014-2018՝** ընդհանուր €1,687,500, որից €1,350,000 ֆինանսավորվում է Եվրամիության կողմից, իսկ €337,500 համաֆինանսավորվում է Վայքի և Սպիտակի քաղաքապետարանների կողմից
- **Ծրագրի բյուջեն 2017 ՖՏ-ում՝** €854,950
- **Պլանավորված գործընկեր ընտանիքների և շենքերի թիվը 2017 ՖՏ-ում ՝** 619 ընտանիք, 27 շենք
- **Մեկ շենքի համար նախատեսված աշխատանքների միջին գումարը՝** €31,700
- **Ծրագրի գործընկերները՝** Սպիտակի քաղաքապետարան, Վայքի քաղաքապետարան, բանկեր

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի քաղաքապետարաններին՝ զարգացնելու և փորձարկելու էներգիայի խնայողության մոդելներ՝ բազմաբնակարան և հանրային շենքերում էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումների և արևային էներգիայի կիրառման ճանապարհով՝ համաձայն Եվրամիության Քաղաքապետերի դաշնագրի ներքո իրենց Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների պլանների:

2017 ֆինանսական տարվա հիմնական գործողություններն են.

- Էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների իրականացում Սպիտակ քաղաքի 17 բազմաբնակարան շենքում
- Էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների իրականացում Վայք քաղաքի 10 բազմաբնակարան շենքում
- Էներգախնայողության, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի մասին հանրային իրազեկվածության և գիտելիքների աճին նպաստող միջոցառումների իրականացում:

Տեխնիկական աջակցություն

Բնակարանային աղքատությունը նվազեցնելու և ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին պատշաճ կացարանով ապահովելու, ինչպես նաև վերջիններիս կողմից ֆինանսական միջոցներ հայթայթելուն աջակցություն տրամադրելու համար Հաբիթաթ Արմենիան նշված ընտանիքներին օգնում է բնակարանի վերանորոգման և այդ աշխատանքների կազմակերպման հարցում, տրամադրում շինարարության տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն:

Հաբիթաթ Արմենիան տրամադրում է նաև ինստիտուցիոնալ տեխնիկական աջակցություն ունի-վերսալ վարկային կազմակերպություններին (ՈՒՎԿ): Այն ուղղված է զարգացնելու վերջիններիս կարողությունները՝ հաջողությամբ տրամադրելու բնակարանային միկրոֆինանսավորման ծառայություններ թիրախային խմբերին: Ինստիտուցիոնալ տեխնիկական աջակցությունն ընդգրկում է ծրագրի մոնիթորինգ, շուկայի վերլուծություն, նոր բնակարանային պրոդուկտների մշակում, կրթական և գովազդային նյութերի մշակում, ինչպես նաև վարկային մասնագետների ուսուցում ֆինանսական միջոցների կառավարման, շինարարության տեխնիկական աջակցության, էներգաարդյունավետության ու վերականգնվող էներգիայի վերաբերյալ:

2016 ֆինանսական տարում Հաբիթաթ Արմենիան բնակարանային աջակցության ծառայություններ է տրամադրել 1,521 ընտանիքների՝ ընդհանուր տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության տեսքով:

2017 ֆինանսական տարում Հաբիթաթ Արմենիան պլանավորում է բնակարանային աջակցության ծառայություններ տրամադրել շուրջ 2,200 անհատի:

Աղետների ռիսկերի նվազեցում և արձագանքում (ԱՌՆԱ)

Հաբիթաթ Արմենիան ՀՀ աղետների կառավարման թիմի (ՀՀԱԿԹ) և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) անդամ է և արտակարգ իրավիճակների դեպքում կներգրավվի համատեղ գործողություններում՝ աջակցելու ՀՀ կառավարությանը կյանքեր փրկելու և կորուստները նվազեցնելու գործում:

ԱՌՆԱՊ-ի հիմնական գործողությունները ներառում են ռիսկերի նվազեցման պատրաստվածություն և արձագանքում:

Հաբիթաթ Արմենիայի Աղետների պատրաստվածության և արձագանքման ռազմավարությամբ սահմանվում են Հաբիթաթ Արմենիայի աղետների արձագանքման ծրագրի սկզբունքները, չափանիշները, ինչպես նաև իր՝ աղետների արձագանքման ծրագրի գործողությունների ու համագործակցության շրջանակները:

Հաբիթաթ Արմենիան մշակել է երկրին համապատասխանող Աղետների արձագանքման օպերատիվ պլան: Պլանը նախատեսում է արձագանքման ժամանակացույց, գնահատման ձևաթղթեր, հաղորդակցության ստանդարտ նյութեր, օրինակելի բյուջեներ և տեխնիկական լուծումներ, որոնք կարող են կիրառվել աղետի դեպքում: Հաբիթաթ Արմենիան մշակել է նաև «Ինչպես դիմակայել երկրաշարժերին» ձեռնարկ, որն ուղղված է բնակիչների՝ երկրաշարժերին դիմակայելու կարողությունների զարգացմանը:

Հաբիթաթ Արմենիան 2016 ֆինանսական տարում բաշխել է 1,906 ձեռնարկ և պլանավորում է 2017 ֆինանսական տարում բաշխել մոտ 1,000 ձեռնարկ խոցելի խմբերին:

Կամավոր աշխատանքի հնարավորություններ

«Գլոբալ վիլիջ»

Հաբիթաթ Արմենիան իրականացնում է «Գլոբալ վիլիջ» ծրագիրը, որը կամավորներին հնարավորություն է ընձեռում մասնակցել տների կառուցման և վերանորոգման նպատակով դեպի Հայաստան կարճաժամկետ ուղևորություններին՝ անմիջականորեն ներգրավվելով կազմակերպության աշխատանքներին: Աշխարհի բոլոր անկյուններից կամավորները միանում են Հաբիթաթի առաքելությանը՝ բարելավելու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների բնակարանային պայմանները: Հաբիթաթ Արմենիայի հետ միասին «Գլոբալ վիլիջ» թիմի անդամները ձեռք ձեռքի տված աշխատում են գործընկեր ընտանիքների և համայնքի անդամների հետ՝ բարեկարգելով տներ և իրազեկելով անբավարար բնակարանային պայմանների խնդրի, ինչպես նաև թե Հայաստանում, թե ամբողջ աշխարհում Հաբիթաթի՝ պարզ ու մատչելի բնակարանային պայմաններ ստեղծելուն ուղղված ջանքերի մասին:

Մինչ օրս Հաբիթաթ Արմենիան հյուրընկալել է ավելի քան 1,050 կամավորների, որոնք նպաստել են բազմաթիվ հայ ընտանիքների կյանքի բարելավմանը:

Հաբիթաթի «Գլոբալ վիլիջ» ծրագրին մասնակցելուց հետո ես գտնում եմ, որ այն ցանկացողներին հնարավորություն է ընձեռում գնալու աշխարհի տարբեր անկյուններ և օգնելու կառուցել պատշաճ և մատչելի կացարաններ կարիքավոր տեղացիների համար: Իմ վերջին ուղևորությունը Տավուշի մարզի Գանձաքար գյուղ «Գլոբալ վիլիջ» ծրագրի հիանալի փորձառության վառ օրինակ է: Աշխատանքը ֆիզիկապես դժվար և երբեմն հոգնեցուցիչ էր: Տանտերը մեզ հետ քրտնաջան աշխատում էր, իսկ նրա կինը մեզ համար քաղցրավենիքներ և սուրճ էր պատրաստում և մեզ միշտ ողջունում էր ջերմ ժպիտով:

Ես կարծում եմ՝ Հաբիթաթի հետ կամավորությունն ինձ ավելի շատ երջանկություն է պարգևել, քան որևէ այլ բան, որ ես երբևէ արել եմ: Ես նաև հնարավորություն ունեցա ծրագրի ավարտից հետո ևս մի քանի օր մնալ Հայաստանում, ուսումնասիրել այս հրաշալի երկիրը և խորապես ծանոթանալ նրա մշակույթին: Հայաստանը միշտ յուրահատուկ տեղ կզբաղեցնի իմ սրտում. և ո՞վ գիտե, գուցե մի օր վերադառնամ:

Ալեն Մանինգ՝ «Գլոբալ վիլիջ» թիմի անդամ

«Մեկօրյա շինարարություն»

Հաբիթաթ Արմենիան իրականացնում է «Մեկօրյա շինարարություն» ծրագիրը, որը հիանալի հնարավորություն է բիզնեսների, կորպորատիվ խմբերի, կազմակերպությունների և ցանկացած թիմի համար, որոնք ցանկանում են աջակցել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին՝ իրականացնելու պարզ, պատշաճ և մատչելի բնակարան ունենալու իրենց երազանքը:

Ձեր թիմը, անկախ իր շինարարական հմտություններից, կարող է միանալ նախաձեռնությանը և օգնության ձեռք մեկնել այն ընտանիքներին, որոնք Հայաստանի մարզերում ապրում են աղքատ բնակարանային պայմաններում:

Միևնույն ժամանակ Ձեր գործընկերների և ղեկավարների հետ Հաբիթաթ Արմենիայի շինարարական նախաձեռնությանը մասնակցելը թիմի ձևավորման և զարգացման արդյունավետ միջոցառում է, ինչպես նաև լավ հնարավորություն՝ համագործակցության և ղեկավարման հմտություններ ձեռք բերելու համար:

Փոխելով ընտանիքի կյանքը…

Դավթյանների բազմանդամ ընտանիքն ապրում է Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում՝ մի հարկի տակ: Սարգիսը՝ տանտերը, աշխատում է տեղական դպրոցում՝ որպես դռնապան: Գալյան՝ տանտիրուհին, զբաղվում է տնային տնտեսությամբ, ինչպես նաև հողագործությամբ և անասնապահությամբ: Համլետը՝ Սարգսի և Գալյայի ավագ որդին, երաժիշտ է, սակայն չունի հիմնական աշխատանք: Սովորաբար նվագում է երեկույթների և ընտանեկան խնջույքների ժամանակ: Տիգրանը՝ միջնեկ որդին, աշխատում է Իջևանի հիդրոէլեկտրակայանում՝ որպես հսկիչ: Կրտսեր որդին՝ Շահենը, տաքսի է վարում: Իսկ Աննան՝ Տիգրանի կինը, խնամում է իրենց երկու զավակներին՝ Սարգսին և Վիկտորյային:

Տիգրանը և Աննան վաղուց էին երազում սեփական տուն ունենալու մասին:

«Մեր փանը բավականաչափ փարածք չկա բոլորիս համար: Մյուս որդիներս էլ այժմ մտածում են ընտանիք կազմելու մասին: Իսկ Տիգրանին և իր ընտանիքին սեփական տանիք է հարկավոր»,- ասում է Գալյան:

Հաբիթաթ Արմենիայի աջակցության շնորհիվ Տիգրանի տունն այժմ տանիք ունի: Հուլիս և սեպտեմբեր ամիսներին ԱՄՆ-ից ժամանած 2 կամավորական խմբեր օգնեցին ընտանիքին կատարելու ներքին հարդարման աշխատանքներ: Երիտասարդ զույգը ևս մեկ քայլով մոտեցավ սեփական տունն ունենալու իր վաղեմի երազանքին:

Աջակցե՛ք ևս մեկ ընտանիքի՝ փոխելու իր կյանքը

Հայաստանում դեռևս կան բազմաթիվ ընտանիքներ, որոնք շարունակում են ապրել աղքատ բնակարանային պայմաններում: Միացե՛ք մեր նախաձեռնությանը՝ կառուցելու պայծառ ապագա պատշաճ բնակարանային պայմաններ տրամադրելու միջոցով: Դուք կարող եք դառնալ մեր առաքելության մասնիկը Ձեր ֆինանսական նվիրատվությունների և կամավորական աշխատանքի շնորհիվ: Ցանկացած չափի նվիրատվություն այսօր նշանակում է, որ շուտով մեկ այլ ընտանիք կկարողանա ապրել ապահով, պատշաճ և մատչելի կացարանում: Ձեռք ձեռքի տալով՝ մենք միասին կարող ենք կոտրել աղքատության կապանքները:

Կատարեք նվիրատվություն

Նվիրաբերեք այսօր և փոխեք ընտանիքների կյանքը: Եվս մեկ օր աղքատ բնակարանային պայմաններում ապրելը կարող է ճակատագրական լինել սերունդների համար:

Ձեր նվիրատվությունը կամ ներդրումը կարող է օգնել.

- Աջակցել 1 ընտանիքի՝ $3,100
- Աջակցել 10 ընտանիքի՝ $31,000
- Աջակցել 50 ընտանիքի՝ $155,000
- Աջակցել 100 ընտանիքի՝ $310,000
- Բարելավել 1 բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքները և բարձրացնել շենքի էներգաարդյունավետությունը՝ $8,000
- Բարելավել 10 բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները և բարձրացնել շենքերի էներգաարդյունավետությունը՝ $80,000
- ԲԲՇ վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերը խթանելու և առավել լայնամասշտաբ դարձնելու նպատակով երաշխիքային ֆոնդ ստեղծելու համար՝ առնվազն $50,000

Կատարեք նվիրատվություն առցանց՝

ԱՄՆ դոլար - www.habitat.org/donate/armenia

Բանկային փոխանցում՝

«Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամ, HSBC Բանկ Հայաստան

ՀՀ՝ 001-174127-001

Շնորհակալություն

ՀԱԲԻԹԱԹ ՖՈՐ ՀՅՈՒՄԵՆԻԹԻ ԱՐՄԵՆԻԱ
Հասցե՝ Երևան 0001, Հանրապետության 85 ա, բն. 9
Հեռախոս՝ +37410 587 188
Էլ. փոստի հասցե՝ info@habitat.am
Կայքէջ՝ www.habitat.am

Habitat for Humanity® Armenia